ւոր ոյժ, որի կատարեալ զարգացման համար հարկաւոր են միայն ժամանակ և բարեյաջող հանգամանքներ»:

Աւ. Տէր Պօղոսեան.

„Вѣст. Воспит." № 6, 1902 г.

ՅԱՒԷՐԺԱՀԱՐՍԸ, Պուշկինի, Թարգմ. Կ. Կրասիլնիկեանի:

(Շարունակութիւն եւ վերջ)

Հիմա գալիս են ամէն տեսակ յանցանքներ խառն ի խուռն ի մի խմբուած, հետեւեալ վերնագրի տակ, որտեղ պատահում են և չորուցամաք, ցուրտ և անգոյն արտայայտութիւններ.

Ստրկական թարգմանութիւն եւ անճշդութիւններ.

«Իսկի *ընդունակ* էլ չէի»—Շնորհք չունիմ:
«Միթէ յարմա՞ր է»—*Այս ինչի նման է*:
«Բախտը քո ձեռքից չտաս»—*չփախցնես*:
«Աւելի *քիչ* գալ»—*ուշ ուշ գալ*:
«Իսկ յիմարներիդ այդպէս *համոզել*»—*խելքից հանել*:
«Գէթ մի քիչ դրամ, *շատ լաւ կը լինէր*»—*աւելի լաւ*:
«Աղջիկ, *յիշիր* իմ խորհուրդները»—երբեմն կարեւոր է որոշել *մտապահութիւնը*՝ *մտաբերութիւնից*, իսկ այստեղ պէտք է ասուի՝ *մտքում պահիր*:
«Երբ քեզ տեսնում եմ»—*հենց քեզ* ...:
«Մի տխրիր, *թող տուր*, որ քեզ սեղմեմ»—Մի տխրիր, *արի* քեզ ս.
«*Ամբողջ* թանկագին քարերով ծածկուած»—*ամբողջապէս* կամ *բոլորը*:
«Ա, անա՛ թէ ինչ ...»—հայերէն չէ, կարելի է ասել՝ *այդպէս, հա*...
«Հենց դրա համար քեզ ասում էի»—*Տեսա՞ր, հապա ինչ էի ասում քեզ*:
«Եւ նա կարող էր, *ինչպէս բարի մարդ*»—... *այդ բարի մարդը*:
«Ի՞նչպէս, եւ դրամ տալ»—*каково!* Նշանակում է ժպրհութեան, հա-

մարձակութեան վերայ զարմանալ, ուրեմն հայա չի էլ ամայում, եւ դրամ...

«Նրա հանից քաշքռուել»—*за нимъ* ...

«Իմ անկումը ինձ օգուտ կը բերէր»—*Ուրախացիր, շա՞տ օգուտ կը բերէ ինձ իմ անկումը:*

«Մեղք է ինձ համար»—*Մեղանչում ես Աստուծոյ առաջ:*

«Երբ հրամարուեցի ես այն ամէնից»—*զոհեցի ... ամէնը.*

«Խնամի»—*խնամիս,* զրեթէ մեր մօտիկ։

«Ողջոյն ինձ, իշխան, քո երիտասարդ իշխանութեան հետ»—*Այսպէս здравствуй* նշանակում է *մի բարձի ծերանամ:*

«Հօ կարելի է մի բան վաստակել *իրան*»—ռուսաց *себѣ,* այդպէս չի բարգմանուի. ասում են *անձի համար,* բայց աւելի լաւ է նոր ձեւացնել նախադասութիւնը:

«Նա միշտ ասում է՝ որ *նրա* գործը ամէնից ծանր է»—*իւր* գործը: Եւ հասարակ *իւր* դերանունաւն անփոյթ գործածութիւնը նոյնպէս մի ոճիր է:

«Ինչո՞ւ էք դուք մուրջ»—*մուրջ կացէք,* կամ *ինչ էք յուր նստէք:*

«Թէ՞ բոլոր երգեր երգեցիք արդեն»—*թէ՞ ամբ երգերի տուգրակը դասարկուել է:*

«Բայց խնամուն էլ *մի յանդիմանէք*»—*թէ արդուն յանէք:*

«Այն լուրի մասին, մեր գեղի մասին»—*ինչ որ մեր գեղում խօսւում են:*

«Հարսանիքի էլ կարծես թէ երգ չէ»—*խսկի հարսանիքին չի սազում:*

«Տես թէ ի՛նչ մեղր է. մարդու գլուխը ու ոտն է ընկնում»—*Պան, պան, ինչ բունդ մեղր է. մարդու գլուխն էլ է նստեցնում, ոտներն էլ բուլացնում:*

«Մի՛ լար, մի՛ վախիր, հնազանդ եղիր»—... *չսիր մեզ:*

«Աստուած գիտէ, թէ ինչ էր»—*Աստուած գիտէ* չի նշանակում *Богъ знаетъ* այլ—*էլ Богу:*

«Էհ, միշտ *պէտք է,* որ այդ աղջկերքը մի օրին սարքեն»—*էհ, միշտ այդ աղջկերքը մի մի օրին են սարքում:*

«Նա ամենուրեքն տեղը չի նստի»—ընդհակառակ՝ *կը կպչի ու էլ տեղից պոկ չի գայ:*

«Ես այն ժամանակ *լաւ կիմանայի*»—*կը գիտենայի* ...

«Մարդս տուն *եկաւ,* բայց ինչո՞ւ (նա) չի երեւում—*տուն է գալիս, բայց ինչու չի երեւում:*

«Բայց ինքն ո՞ւր է»—*իսկ* ... մեր բարգմանիչները շատ անգամ անխիր գործ են ածում *բայց, սակայն, իսկ,* որոնք որոշ զօրութիւն ունին:

«Տէր իմ Աստուած» — *Տէր Աստուած*: Հայն Աստծու մասին իւր յատուկ ոճերն ունի՝ ի դէպ է ասել, թէ ոմանց ասած *Տիրոջ հրամանը* տգէտ միսիոնարների հայախօսութիւնն է յիշեցնում. մենք ասում ենք *Մեր Տէր Աստծու կամ Յիս. Քրիստոսի հրամանը*:

«Սիրում ենք *ազատ* բարձրանալ» — *արձակ*:

«Թփերի տակ *թրթռում է* խաւարում» — *դող ընկաւ*:

«Գուշակող աղջկաս» — ներիք է՝ *գուշակ*, կամ աւելի լաւ՝ *իմաստուն*:

«*Մեզ մօտ* խնջոյք կայ» — *у нас*:

«Հիանալի դէպք» — *Հրաշք էր դէպքը*:

«Ինձ խնամում է յաւերժահարսը» — *պաշտպան յաւ.*

«Քո ապարանքը ինձ հարկաւոր չէ» — *չուզեցի քո ...*

«Թէ՞ (ես) մանուկ եմ, որ մի քայլ *անել ինձ չի կարելի* առանց դայեակի» — որ *չկարողանամ մի քայլ անել առ. դ.*

«Մեր քրքիջով, *ծիծաղով*» — *ծիծաղելով* կամ *ծափ անելով*:

«Եւ չհրապուրէք մանկան *ջրի մէջ*» — *դէպի ջուրը* կամ *չխափանէք մանուկին, որ հրապուրուած ջուրն ընկնի*:

«Զգոյշ եղիր դու, եւ դուրս *եկ* նրան դիմաւորելու» — *պատասխ. նրա գալստեան եւ դուրս գնա իրան դիմաւորելու.*

«Ո՞վ է հարսնացուն, *որին ինձ փոխարինեց*» — *փոխարինել* նշանակում է հատուցանել, առաւելապէս պարտքի համար է ասվում. իսկ օրինակում պէտք է ասուի՝ *որով ինձ փոխանակից*:

«Ինչպէս ես կարծում» — *ինչ ես կարծ.*

Լոկ միայն մերկ նախադասութիւնները կարդալով՝ կարելի է թէ ընթերցողը անմիջապէս չըմբռնէ թարգմանութեան թուլութիւնների բոլոր ծանրութիւնը, վասն որոյ վերջը մենք առաջ կը բերենք մի ամբողջ մենախօսութիւն՝ սրբագրութեամբ հանդերձ: Ժողովրդական լեզուից նա փոխ է առել միայն հետևեալը· օյին, նուշ, սիպտակ, նամբալ, ջանել, ջէբ, նանի, ախր, հօ, գցեց, *և կարծում ենք, թէ այս է բոլորը: Այս ձգտումը միանգամայն գովելի ենք համարում, բայց և այնպէս ոչ մի հոգևոր գործում ծայրայեղ մաքրամոլութիւնը, պուրիզմը, ցանկացած հետևանք չի ունենում. այս դէպքում—լեզուի համար խիստ նեղ սահման է գծում, այն աղքատացնում է, կենդանութեան դրոշմը նորանից խլում է: Ուրեմն որոշ աստիճանով գրականական լեզուն խնամութիւն պէտք է հաստատէ ժողովրդեան լեզուի հետ՝ ինչպէս որ ինքը թարգմանիչը արել է շատ ժլատ կերպով.*

բայց արդէն ժլատութիւնն էլ ապացոյց է, թէ մի կարիք կայ, որ անհնարին է անտես առնել։

Տաղաչափութեան արուեստի մասին չենք ուզում երկարել, որովհետև այդ արուեստը մեզանում շատ անարդուած է, և մինչև այսօր չենք կարողանում արտաքին նշաններից արուեստի ներքին գաղտնիքները թափանցել, և ոչ էլ կարիք և պահանջ ենք զգում այդ բանի համար։ Ես ամենայն դիտակցութեամբ ասում եմ, որ Սմ. Շահազիզեանի երաժշտական տաղաչափութիւնից և իրօք բանաստեղծութիւն պարունակող ոտանաւորներից յետոյ, գրեթէ ոչ ոք այդ արուեստը աւելի չբարձրացրեց, իսկ շատերը նոյն իսկ նորա բարձրութեան չհասան։ Մեզանում վանկերի թիւը հաշուելուց աւելի ուրիշ պահանջ չեն դնում։ Թող ներուի, որ դէթ մի նկատողութիւն անեմ։

Ուրախ խմբով մենք	2, 3
Խորը յատակից	2, 3
Գիշերն ելնում ենք,	2, 3
Տաքանում լուսնից ...	3, 2
Սիրում ենք մենք գիշերներով ...	4, 4
. . . . .	4, 3
. . . . .	4, 4
. . . . .	4, 3

Էհ, որովհետև վանկերի թիւը մեծ բան է համարվում, մենք էլ ոկսենք այդ հաշուից։ Ինչպէս ընթերցողը նկատում է, այս երգը երկու երաժշտական մասից է կազմուած, մինը՝ 5 վանկական տողերով, միւսը՝ 8 և 7 վանկական տողերով։ Պուրիստները կարող են ասել, թէ առաջին մասը խորտուբորտութիւն ունի, որովհետև չորրորդ տողի հատածները (3, 2) նման չեն նախընթացների կարգին (2, 3), և ընթերցանութեան ժամանակ խրթնութիւն պէտք է զգացնեն։ Թերևս այդ այդպէս լինէր, եթէ երգը այն տողով էլ վերջանար. բայց քանի որ յետոյ ոկսվում է երկրորդ մասը, այն ևս նոր շէնքով (4, 4. 4, 3), մենք կարծում ենք, որ երաժշտական տեսակէտից՝ չորրորդ տողի փոփոխութիւնը մի տեսակ նախերգանք է, պրէլիւդիայ է, երկրորդ մասի համար, և այդպէս երգը դառնում է դեղդեղանք, փոխանակ միակերպ դանդաղութեան մատնուելու։

Բայց մենք կուզենայինք ընթերցողի ուշադրութիւնը դարձնել աւելի ոտքի յարմարութեան վերայ։ Առաջին տողը վերջանում է «մենք» բառով, երկրորդ տողը «ենք» բառով, սա լաւ ոտք է, բայց եթէ ի նկատի առնունք, որ «ենք»-ից առաջ մի մեն տառ էլ կայ (ելնում), ուրեմն երրորդ տողում հնչուած ենք

լսում «մ-ենք», որով լաւ ոտքը դառնում է՝ ճոխ ոտք։ Սակայն այդ այդպէս է միայն աչքի համար, ընթերցանութեան ժամանակ. իսկ ականջի մէջ, արտասանութեան ժամանակ, այդ դեղեցիկ շէնքը փլվում է, վասն զի երկու ոտքերի շեշտերը իրար չեն ծածկում, որ երաժշտական տեսակէտով մեծ թերութիւն է։ Եւ իրօք, առաջին տողի «մէ՛նք» բառը շեշտ ունի, իսկ երրորդ տողի «ենք» էական բայն՝ շեշտ չունի, այլ շեշտը վերջընթեր վանկումն է (ելնո՛ւմ ենք)։ Մեր բանաստեղծները այս բաների վերայ ուշադրութիւն չդարձնելով և անդադար, այո՛, անդադար շեշտուած ոտքի դէմ՝ խուլ կամ թարմատար ոտք դնելով, չեն նկատում, որ ոտանաւորը կորցնում է երաժշտութիւնը, այսինքն բոլոր արժէքը։

Այժմ դառնանք 5. տողին. Այն տեղ կարդում ենք «սիրում ենք մենք», այսինքն «մ-ենք մենք» կամ անմիջապէս 2 «մենք», որով կազմվում է երաժշտական խղուբրդուն, և ուրեմն դորանով արդէն ամենայն բան ասած կը լինենք։ Տաղաչափութեան մասին միայն այսքան աւելացնենք, որ թարգմանիչը իւր գործը շատ է տգեղացրել մէջը աւելորդ դերանուններ և շատ անգամ վանկերը լրացնելու համար անպետ բառեր դիզելով։ Բովանդակութիւնն իւր յարմար ձևը պէտք է գտնի, և ոչ թէ ձևի համար բաներ հնարուին։—

Վերևը խոստացել էինք մի ամբողջ մենախօսութիւն առաջ բերել։ Մենք ընտրում ենք հէնց առաջին մենախօսութիւնը, որ ապացոյց պէտք է լինի, թէ թարգմանիչը իւր գործն սկսել է մեծ երկիւղածութեամբ, բայց և երկնչելով։ Նա գնալով, աւելի ազատվում է երկիւղից և միւս կտորները աւելի լաւ է թարգմանում։ Նա ի հարկէ թարգմանել է տաղաչափութեամբ։ Նորա թարգմանութեան դէմ մենք ներկայացնում ենք մեր արձակ թարգմանութիւնը, բոլոր վերի ասածները աւելի լուսաբանելու համար։ Նորա թարգմանութիւնը տողերի չենք բաժանի, այլ կը գրենք արձակ գրութեան ձևով։

ՏԱՂԱՉԱՓՈՒԹԻՒՆ.

Օհ, բանն էլ այդ է, որ դուք բոլորդ յիմար էք, յիմար, ջահէլ աղջկերք։ Թէ ձեզ պատահեց մի նախանձելի ու հասարակ

ԱՐՁԱԿ ՇԱՐԱԴՐՈՒԹԻՒՆ.

Օհ, հէնց ամէնքդ էլ՝ ձեր ջահիլ տեղով, ամէնքդ յիմար էք։ Թէ բախտը բերի, ջահիլ աղջկայ ճանկն ընկնի մի երևե-

մարդ, դուք պիտի Նրան էլ ամենևին ձեռքից չը թողնէք։

Իսկ ինչո՞վ.—աղնիւ, խելացի վարքով հրապուրել Նորան, մերթ փաղաքշանքով, և մերթ խստութեամբ, մի-մի անգամ էլ հարևանցօրէն խօսք պիտի գցել պսակի մասին, իսկ ամէնից շատ անարատ պահել կոյսի պատիւը —այդ անգին գանձը։

Դու ինչպէս խօսքը, եթէ դուրս թռաւ, էլ ձեռք չի ընկնի։ Բայց ամուսնութեան թէ էլ յոյս չը կայ, հօ կարելի է մի բան վատակել իրան, կամ գոնէ ծնողի համար։

Պէտք է մտածել՝ «նա ինձ յաւիտեան հօ չի սիրելու և փայփայելու»։ Ի՛հ, չէ՛, դուք իսկի ընդունակ էլ չէք մի լաւ բան անել։

Միթէ յարմա՞ր է. իսկոյն դժւում էք և երջանիկ էք ձրի կատարել Նրա հաճոյքը։ Պատրաստ էք ձեր սիրելիի վզից կախ ընկնել, իսկ այդ սիրելին, տեսար—չքացաւ, հետքն էլ չերևաց։ Եւ դուք էլ ոչինչ օգուտ չունեցաք... Օհ, դուք բոլորդ էլ այդպէս յիմար էք։

Քեզ հարիւր անգամ մի՛թէ չեմ ասել. Էյ, աղջիկ, նայիր, այնքան էլ ախմար մի՛ լինիր, բախտը քո ձեռքից չը տաս. մի՛

լի, իշխան մարդ, էլ չպէտք է բաց թողնէք. պինդ պէտք է բռնէք։

Էն էլ գիտէ՞ք ինչով. Նամուսով, աբուռով, խելօք շնորհով հրապուրել, երբեմն երես չտալով, երբեմն քաղցր վարմունքով մի-մի անգամ էլ, տակէ տակ, հանաքի տալով, խօսք գցել պսակի մասին, բայց աչքի պտուղի պէս անարատ պահել կուսական պատիւը, այդ անգին գանձը։

Այդ բանը, ինչպէս բերանից դուրս թողած խօսքդ, էլ յետ չես դարձնի։ Իսկ եթէ ամուսնութեան իսկի յոյս չունենաս, դու կարող ես մի բանով շահուիլ ինքդ, կամ ծնողիդ համար մի օգուտ դուրս քաշել։

Պէտք է ինքդ ու ինքդ մտածես, թէ «յաւիտեան հօ սիրելու չէ՞ նա ինձ, միշտ այսպէս հօ չի՞ փայփայելի»։ Էհ, ձեզ ո՞վ է շնորհ տուել, որ կարգին բան բռնէք։

Թէ չէ, այս ինչի՞ նման է։ Իսկոյն գժվում էք, վազէվազ գնում էք ձրի կատարելու Նրա հաճոյքները, պատրաստ էք ամբողջ օր կախ ընկած մնալ սիրահարի վզին. իսկ սիրելին՝ մէկ էլ տեսար, թռաւ, և իզն ու թօզը չմնաց ... Օհ, դուք ամէնքդ յիմար էք։

Միթէ հարիւր անգամ չե՞մ ասել. «Ա՜յ, աղջի, տես, խելքդ չթռցնես, դրան առջև չոքած բախտիդ հասնի, իշխանին ձեռ-

թող իշխանին, և յիմարաբար քեզ չկորցնես։
Եւ ի՞նչ դուրս եկաւ. դէհ, այժմ նստիր ու միշտ դու ող-բա, ինչ որ յետ բերել չես կա-րող արդէն։

քիչդ չթողնես, և ի զուր հոգիդ չկորցնես։
Բայց ո՞ւմն ես ասում. Դէ, հիմի նստիր ու սև բախտդ լաց, որ էլ իսկի դառնալու չէ։

Ս. Մ.

ԱՆԱՍՆԱՊԱՀՈՒԹԻՒՆ ԵՒ ԱՆԱՍՆԱԲՈՒԺՈՒԹԻՒՆ.

ՄԵԾ ԵՂՋԻՒՐԱՒՈՐ ԱՆԱՍՈՒՆՆԵՐԸ

Ծնունդ.—*Կովի յղութիւնը տևում է սովորաբար 240—321 օր, մեծաւ մասամբ 285 օր, այսինքն 9 ամիս 15 օրից աւելի։ Յղացած երինջի կամ կովի ստինքը յղութեան երկրորդ կէսից յետոյ, երբ սովորաբար հորթը սկսում է շարժուել արգանդում, սկսում է զարգանալ։ Յղի կովին պէտք է շատ լաւ և զգուշութեամբ խնամել, նորան պէտք է հեռու պահել ամէն տեսակ հարուածներից, խփելուց, չպէտք է վազեցնել, աշխատեցնել։ Լաւ կլինի յղի կովերին պահել առանձին ախոռներում, որտեղ ներս ու դուրս անելը պէտք է շատ զգուշութեամբ կատարուի՝ միաժամանակ միևնոյն դռնից երկու անասուն (մէկը յղի) չպէտք է անցկենան։ Հովիւը պարտաւոր է ուշք դարձնել, որ նախրի մէջ յղի կովերը չկռուեն և եղջիւրներով կամ ոտներով իրար չհարուածեն։ Լաւ կլինի գարնանը, երբ սովորաբար նախրի մէջ շատ կովեր են յղի լինում, հովիւների թիւը աւելացնել։ Խիստ ծանրացած յղի կովերի համար վտանգաւոր է, երբ ստամոքսը արագութեամբ ուռչում է, որովհետև կարող են վիժել. ուստի պէտք է զգուշանալ այդպիսիներին ձմեռը շատ սառն ջուր խմացնելուց, մանաւանդ դուրսը և շատ սառն կամ եղեամով ծածկուած կեր ուտացնելուց։*